ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

**ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2024 թվականի դեկտեմբերի 23-ին կայացած գիտական Խորհրդի N 9 նիստի**

Նախագահ – Ս.Ս.Քելյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 32 անդամներից 26-ը (ցուցակը կցվում է)

Խորհրդի նախագահ Ս.Ս.Քելյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

1. **Ասպիրանտների ատեստավորում** /զեկ.ամբ վարիչներ/
2. **Ասպիրանտների ատենախոսական թեմաների և գիտական ղեկավարների հաստատում** /զեկ.ամբ.վարչներ/
3. **Մագիստրատուրայի մասնագիտական պրակտիկաների արդյունքների քննարկում** /զեկ.ամբ.վարչներ/
4. **2024/2025 ուստարվա 2-րդ ընթացիկ և եզրափակիչ քննությունների կազմակերպումը ֆակուլտետում** /զեկ.գրասենյակի ղեկ.-դեկանի տեղ. Գ.Փ.Ալեքսանյան/
5. **Ընթացիկ հարցեր**

Օրակարգը հաստատելուց հետո

***1.***

***1.1 ԼՍԵՑԻՆ.*** Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **դոց.Արսեն Թորգոմի Գրիգորյանի** հաղորդումը Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի 4-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Անուշ Գագիկի Համբարձումյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի 4-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Անուշ Գագիկի Համբարձումյանին** ատեստավորել:

*1.2 ԼՍԵՑԻՆ.* Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **դոց.Արսեն Թորգոմի Գրիգորյանի** հաղորդումը Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի 4-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Արթուր Գրիշայի Աբրահամյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի 4-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Արթուր Գրիշայի Աբրահամյանին** ատեստավորել:

*1.3 ԼՍԵՑԻՆ.* Սերվիսի ամբիոնի վարիչ **դոց.Սեյրան Սուվարյանի** հաղորդումը Սերվիսի ամբիոնի 4-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Նարինե ՄԱրտիրոսի Աբգարյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սերվիսի ամբիոնի 4-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Նարինե Մարտիրոսի Աբգարյանին** ատեստավորել:

*1.4 ԼՍԵՑԻՆ.* Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի վարիչ **դոց.Մարինե Սարգսի Մկրտչյանի** հաղորդումը ամբիոնի 4-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Հարություն Սոսի Երեմյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի 4-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Հարություն Սոսի Երեմյանին** ատեստավորել:

**2.**

*2.1 ԼՍԵՑԻՆ.* Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **դոց.Արսեն Թորգոմի Գրիգորյանի** հաղորդումը Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի 4-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Արթուր Գրիշայի Աբրահամյանի** ատենախոսական թեմայի վերնագրի խմբագրման հարցի վերաբերյալ:

*ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ.* Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի 4-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Արթուր Գրիշայի Աբրահամյանի «Արցախի հանրապետության ժողովրդագրաաշխարհագրական իրավիճակի արդի հիմնախնդիրները»** վերնագրով ատենախոսական թեման խմբագրել և հաստատել հետևյալ վերնագրով՝ **«Արցախի ժողովրդագրաաշխարհագրական իրավիճակի արդի հիմնախնդիրները (2005-2023թթ)»:**

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան, **դոց.Ս.Ս.Քելյանը,** Սերվիսի ամբիոնի վարիչ, **դոց.Ս.Ռ.Սուվարյանը,** Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **Ա.Ս.Փիլոյանը**, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ **դոց.Գ.Փ.Ալեքսանյանը**, Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի **դոց.Ա.Հ. Պոտոսյանը:**

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Բաց քվեարկության արդյունքներով (Կողմ՝ 23, Ձեռնպահ՝ 3, Դեմ՝ 0) Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի 4-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Արթուր Գրիշայի Աբրահամյանի** ատենախոսական թեման հաստատել **«Արցախի ժողովրդագրաաշխարհագրական իրավիճակի արդի հիմնախնդիրները (2005-2023թթ)»** վերնագրով:

*2.2 ԼՍԵՑԻՆ.* Սերվսի ամբիոնի վարիչ **դոց.Սեյրան Ռաֆիկի Սուվարյանի** հաղորդումը Սերվիսի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Արմինե Հայկասարի Զուրաբյանի ատենախոսական թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ:

*ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ.* Սերվսի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Արմինե Հայկասարի Զուրաբյանի ատենախոսական թեմա հաստատել **«Բնահենք զբոսաշրջության զարգացման նախադրյալները ՀՀ-ում»** («Աշխարհագրություն» (Սերվիս), դասիչ՝ ԻԴ.03.01) վերնագրով և գիտական ղեկավար նշանակել աշխահրագրական գիտությունների դոկտոր Հովիկ Յախշիբեկի Սայադյանին:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝ 25 ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 1, Սերվսի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Արմինե Հայկասարի Զուրաբյանի ատենախոսական թեման հաստատել **«Բնահենք զբոսաշրջության զարգացման նախադրյալները ՀՀ-ում»** վերնագրով, իսկ գիտական ղեկավար հաստատել աշխահրագրական գիտությունների դոկտոր Հովիկ Յախշիբեկի Սայադյանին:

*3. ԼՍԵՑԻՆ.* Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի ժամանակավոր պաշտոնակատար **դոց.Ա.Թ.Գրիգորյանը**, Երկրաֆիզիկայի, ինժեներային և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի վարիչ **դոց.Մ.Ս.Մկրտչյանը**, Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **դոց.Վ.Մ.Մանուկյանը** և Քարտեզագրության

և գեմորֆոլոգիայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **Ա.Ս.Փիլոյանը** և Սերվիսի ամբիոնի վարիչ **դոց.Ս.Ռ.Սուվարյանի** հաղորդումը մագիստրատուրայի մասնագիտական պրակտիկաների ընթացքի վերաբերյալ: Ամբիոնի վարիչները նշեցին, որ պրակտիկաների անցկացման ընթացքում որևէ բնույթի խնդիրներ չեն առաջացել:

***ՈՐՈՇԵՑԻՆ.*** Ընդունել ի գիտություն:

***4. ԼՍԵՑԻՆ.*** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ Գ.Փ.Ալեքսանյանի հաղորդումը **2024/2025 ուստարվա 2-րդ ընթացիկ և եզրափակիչ քննությունների** կազմակերպման վերաբերյալ: Գ.Ալեքսանյանը մեկ անգամ ևս մանրամասնորեն ներկայացրեց եզրափակիչ քննությունների ընթացակարգը, հորդորեց խորհրդի անդամներին և կրթական ծրագրի ղեկավարներին հետևողական լինել ստանձնած պարտականություններին:

***5. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ***

***ԼՍԵՑԻՆ.*** Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի պրոֆեսոր **Ս.Հ.Հայրոյանի** հաղորդումը ամբիոնում գործող կրթական ծրագրերի վերաբերյալ: Հաղորդման ընթացքում պրոֆ.Ս.Հայրոյանն առաջարկեց ձևավորել հանձնաժողով և լրամշակել գործող կրթական ծրագիրը: Հաղորդման ընթացքում պրոֆ.Ս.Հ.հայրոյանը հույս հայտնեց, որ կձևավորվի մասնագիտական հստակ ուղղվածություն ունեցող կրթական ծրագիր՝ բարձր կարգի մասնագետներ պատրաստելու նպատակով:

***ՈՐՈՇԵՑԻՆ.*** Սահմանված ժամկետում ***(մինչև 24.01.2025) և***երկայացնել հանձնաժողովի անդամների ցանկը Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնում գործող կրթական ծրագրի վերանայման և լրամշակման նպատակով:

**Գիտական խորհրդի նախագահ** **Ս.Ս.Քելյան**

**Գիտական խորհրդի քարտուղար** **Ե.Ս.Մանուկյան**